ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26

«10» 04 2018թ. քաղ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 62-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազներին Հայաստանի Հանրապետության դատախազության կադրերի ռեզերվում ընդգրկելու և ռեզերվից հանելու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 10 -ի

N 26 հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազներին դատախազության կադրերի ռեզերվում **(այսուհետ՝ կադրերի ռեզերվ)** ընդգրկելու և ռեզերվից հանելու կարգը:

2. Դատախազները կադրերի ռեզերվում կարող են ընդգրկվել՝

ա) հաստիքի կրճատման արդյունքում,

բ) դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելու, իր կողմից պաշտոն զբաղեցնող դատախազության կառուցվածքային ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքերում, եթե նրան համապատասխան պաշտոնում նշանակել հնարավոր չէ:

3. Դատախազը կադրերի ռեզերվում ընդգրկվում կամ ռեզերվից հանվում է գլխավոր դատախազի հրամանով, որտեղ նշվում են դատախազին կադրերի ռեզերվում ընդգրկելու և ռեզերվից հանելու հիմքերը:

4. Կադրերի ռեզերվում դատախազի ընդգրկվելու առավելագույն ժամկետը 1 տարի է, բայց ոչ ավելի, քան դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը:

5. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում չեն հաշվարկվում դատախազի՝ ժամանակավոր անաշխատունակության, ամենամյա կամ կարճատև արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները:

6. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում, հաշվի առնելով թափուր հաստիքների առկայությունը, ինչպես նաև դատախազի մասնագիտական գիտելիքներն ու ունակությունները, վերջինիս առաջարկվում են համապատասխան պաշտոններ:

7. Դատախազը կադրերի ռեզերվից հանվում է հետևյալ դեպքերում՝

ա) պաշտոնի նշանակվելիս.

բ) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերով դատախազի պաշտոնից ազատվելիս.

գ) կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում առաջարկված պաշտոններից առնվազն 2 անգամ հրաժարվելու դեպքում:

8. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված կարգով առաջարկված պաշտոնի նշանակվելու համաձայնություն տալու դեպքում դատախազը գլխավոր դատախազի հրամանով 10-օրյա ժամկետում հանվում է կադրերի ռեզերվից: